ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Փոքրաքանակ երեխաներով համալրված Մոդուլային տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերը թվով 10 համայնքներում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 գնման պայմանագրում 2023 թվականի հունիսի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 29.12.2022թ N2111-Ն և 18.05.2023թ. N 764-Ն որոշումներ:
Փոփոխության նկարագրություն	ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
28.10.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 գնման պայմանագրի

ք. Երևան 12.06.2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն և 2023 թվականի մայիսի 18-ի N 764-Ն որոշումները և Փոքրաքանակ երեխաներով համալրված Մոդուլային տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերը թվով 10 համայնքներում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.10.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր N 2 հավելվածով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011040798, 900011040806, 900011040814, 900011040822, 900011040830, 900011040848, 900011040855, 900011040863, 900011040871, 900011040889 ՀՎՀՀ 02565827	<<Հայնախագիծ>> ԲԲԸ ք. Երևան, Չարենցի 1 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2470100038500000 ՀՎՀՀ 01503291
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Գ. Ազիզյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
28.10. 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 գնման պայմանագրի
12 . 06 .2023թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N 2
28.10. 2022թ. կնքված
ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հերթով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	Փոքրաքանակ երեխաներով համալրված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերը թվով 10 համայնքներում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝														
	71241200/17	ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/16	ՀՀ Արարատի մարզի «Նիզամիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/15	ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/14	ՀՀ Գեղարքունիքի մարզի «Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/13	ՀՀ Լոռու մարզի «Բլագոդարնոյեի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/12	ՀՀ Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/1	ՀՀ Շիրակի մարզի «Հովունիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000

	71241200/20	ՀՀ Վայոց ձորի մարզի «Գողթանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/18	ՀՀ Տավուշի մարզի «Գոշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	71241200/19	ՀՀ Տավուշի մարզի «Նավուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000
	ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-	-	-	45 000 000	45 000 000	45 000 000	45 000 000	45 000 000	45 000 000	45 000 000	45 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011040798, 900011040806,
900011040814, 900011040822,
900011040830, 900011040848,
900011040855, 900011040863,
900011040871, 900011040889
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.

07.06.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.11093.23

Բենեֆիցիար՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.11093.23

(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «Հայնախագիծ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 28.10.2022թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԽՇՁԲ-22/3 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,150,000.00 (երեք միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 31 մայիսի 2024թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender4@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ՄԱԽՇՁԲ-22/3 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պարտավորությունների առուվաճառքի բաժնի ղեկավարի ժ/պ
Կարինե Առաքելյան

«AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

07.06.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.11092.23

Բենեֆիցիար՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.11092.23
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՄԱԽՇՁԲ-22/3 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Հայնախագիծ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից 28.10.2022թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԽՇՁԲ-22/3 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 4,725,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 31 մայիսի 2024թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender4@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՄԱԽՇՁԲ-22/3 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պարտավորությունների առուվաճառքի բաժնի ղեկավարի ժ/պ
Կարինե Առաքելյան

«AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
37, բ. Երևան, 0010
Գ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou